# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
# ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2019 թվական N13

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 7-Ի N3 ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 17-րդ հոդվածներով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի մարտի 7-ի N3 արտահերթ նիստի օրակարգը՝

1)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը հաստատելու մասին.

2)ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի N2-Ն որոշման մեջ փոփոխություններ եվ լրացումներ կատարելու մասին.

3)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունն ի գիտություն ընդունելու մասին.

4)ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրի բնակիչներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու և Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի N114 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին.

5)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող անշարժ գույքն անհատույց շահագործման իրավունքով տրամադրելու մասին.

6)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական տարածքում գտնվող և որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված հողամասերը համայնքային սեփականություն ճանաչելու մասին.

7)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող հողամասը սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտի իրավունքով) տրամադրելու մասին.

8)Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի վարչական սահմաններում ընդգրկված, պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության տրամադրմանը համաձայնություն տալու մասին:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ

ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ

ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ

ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ

ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ

ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ

ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7

ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
7 մարտի 2019 թվական N14

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 35-րդ հոդվածով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2018 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
2.Հաստատել համայնքի բյուջեի եկամուտների կատարման վերաբերյալ հաշվետվությունը (01.01.2018թ. - 31.12.2018թ. ժամանակահատվածի համար):
3.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ գործառնական դասակարգման (01.01.2018թ-31.12.2018թ. ժամանակահատվածի համար):
4.Հաստատել համայնքի բյուջեի ծախսերի կատարման վերաբերյալ հաշվետվությունը ըստ տնտեսագիտական դասակարգման (01.01.2018թ-31.12.2018թ. ժամանակա հատվածի համար):
5.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի կամ պակասուրդի (դեֆիցիտի) կատարման վերաբերյալ հաշվետվությունը (01.01.2018թ.-31.12.2018թ. ժամանակահատվածի համար):
6.Հաստատել համայնքի բյուջեի հավելուրդի օգտագործման ուղղությունների կամ պակասուրդի (դեֆիցիտի) ֆինանսավորման աղբյուրների կատարման վերաբերյալ հաշվետվությունը (01.01.2018թ.- 31.12.2018թ. ժամանակահատվածի համար):

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7
ք. Մեղրի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ
ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2019 թվական N15-Ն

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ հոդվածով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով, 33-րդ հոդվածի 4-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի հունվարի 29-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 2-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները,

1)Որոշման 3-րդ կետի 2-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 1-ի:

2)Որոշման 4-րդ կետի 3-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը ըստ տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 2-ի:

3)Որոշման 7-րդ կետի 6-րդ հատվածում (համայնքի բյուջեի ծախսերը՝ ըստ գործառնական և տնտեսագիտական դասակարգման) կատարել փոփոխություններ և լրացումներ համաձայն հավելված 3-ի:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7
ք. Մեղրի

Հավելված N1
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի հունվարի 29-ի N2-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 2
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

# 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 2-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**հազ.դրամ**

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի և դասերի անվանումները | Ընդամենը (ս.7+ս.8) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ, պետական կառավարում | 260.0 | 0.0 | 260.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | -600.0 | 0.0 | -600.0 |
| 2921 | 9 | 2 | 1 | Հիմնական ընդհանուր կրթություն | 340.0 | 0.0 | 340.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N2
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի հունվարի 29-ի N2-Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 3
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

# 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 3-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**հազ.դրամ**

| Տողի NN | Բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | NN | Ընդամենը (ս.5+ս.6) | այդ թվում | |
|---|---|---|---|---|---|
| | | | | վարչական մաս | ֆոնդային մաս |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** |
| 5113 | -Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | -600.0 | x | -600.0 |
| 5122 | - Վարչական սարքավորումներ | 5122 | 600.0 | x | 600.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

Հավելված N3
ՀՀ Սյունիքի մարզի
Մեղրի համայնքի ավագանու
2019 թվականի հունվարի 29-ի N2 -Ն որոշման

ՀԱՏՎԱԾ 6
ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԾԱԽՍԵՐԸ ԸՍՏ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ
ԾԱԽՍԵՐԻ ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԵՎ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ

## 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի <<ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 2-Ն ՈՐՈՇՄԱՆ 6-ՐԴ ՀԱՏՎԱԾՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐԸ

**հազ.դրամ**

| Տողի NN | Բաժին | Խումբ | Դաս | Բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման բաժինների, խմբերի, դասերի, ինչպես նաև բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման հոդվածների անվանումները | Տնտեսա-գիտական դասակարգ-ման հոդված | Ընդամենը (ս.8+ս.9) | այդ թվում՝ | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | | վարչական բյուջե | ֆոնդային բյուջե |
| **1** | **2** | **3** | **4** | **5** | **6** | **7** | **8** | **9** |
| 2111 | 1 | 1 | 1 | Օրենսդիր և գործադիր մարմիններ,պետական կառավարում | | 260.0 | 0.0 | 260.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | 260.0 | x | 260.0 |
| 2161 | 1 | 6 | 1 | Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ (այլ դասերին չպատկանող) | | -600.0 | 0.0 | -600.0 |
| | | | | - Շենքերի և շինությունների կապիտալ վերանորոգում | 5113 | -600.0 | x | -600.0 |
| 2921 | 9 | 2 | 1 | Հիմնական ընդհանուր կրթություն | | 340.0 | 0.0 | 340.0 |
| | | | | - Վարչական սարքավորումներ | 5122 | 340.0 | x | 340.0 |

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
7 մարտի 2019 թվական N16

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՀՆԳԱՄՅԱ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 82-րդ հոդվածի 7-րդ մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2017-2021 թվականների հնգամյա զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ավագանու
2019թ. մարտի 7-ի թիվ 16 որոշման

***Մեղրի համայնքի 2017-2021 թվականների զարգացման հնգամյա ծրագրի իրականացման վերաբերյալ***

## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

| Հ/Հ | Ծրագրի անվանումը, | Նախահաշիվ/մլն.դրամ/ | Իրականացված (2017թ) | Իրականացված (2018թ) | Ծանոթություն |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
| 1 | Հանրային տրանսպորտի ներդրում Մեղրի համայնքում | 103,6 | 12 405 | 89,9 | 2017 հանրային տրանսպորտի ծառայության մատուցումը կազմակերպվում էր մասնավոր հատվածի ներգրավմամբ, իսկ 2018 թ.<<Ենթակառուցվածքների զարգացում Մեղրի համայնքում>> ծրագրով ներդրվել է հանրային տրանսպորտի ամբողջական համակարգ. համայնքին է հանձնվել ձեռք է 3 միկրոավտոբուս, կառուցվել է 11 կանգառ. կազմակերպվում են միջբնակավայրային կանոնավոր ուղևորափոխադրումներ |
| 2 | Մանկապարտեզի կառուցում Վարդանիձոր գյուղում | 37,0 | 20,0 | 15,4 | Ընթանում են շինարարական աշխատանքներ: |
| 3 | Մանկապարտեզների կառուցում Լիճք, Լեհվազ, Շվանիձոր, Կարճևան գյուղերում | 68,0 | 0,0 | 0,0 | Շվանիձոր և Կարճևան գյուղերում մանկապարտեզների կառուցման համար մշակվում են սուբվենցիոն ծրագրեր 2019 թվականի պետ. բյուջեից հատկացումներ ստանալու նպատակով, իսկ Լիճք և Լեհվազ գյուղերում դեռևս չի իրականացվել: |
| 4 | Մանկապարտեզի կառուցում Նռնաձոր գյուղում | 25,0 | 0,0 | 0,0 | Իրականացվում են ֆոնդհայթայթման աշխատանքներ |
| 5 | Մանկապարտեզի կառուցում Ալվանք գյուղում | 25,0 | 0,0 | 0,0 | Չի իրականացվել: |
| 6 | Մեղրի քաղաքի մանկապարտեզի վերանորոգում | 312.988.800 | 0,0 | 0,0 | Ակնկալվում է, որ կիրականացվի <<Իմ քայլը>> հիմնադրամի կողմից |
| 7 | Ճանապարհային սպասարկման համակարգի ձևավորում և համապատասխան տեխնիկայի ձեռքբերում | 106,9 | 0,0 | 95,6 | Արդեն ձեռք է բերվել ճանապարհային սպասարկման համակարգի ներդրման համար անհրաժեշտ 2 էքսկավատոր և մեկ ինքնաթափ: |

| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
|---|---|---|---|---|---|
| 8 | Գյուղմթերքի փոխադրման կազմակերպում և բեռնատար մեքենայի ձեռքբերում | 20,0 | 0,0 | 0,0 | Չի իրականացվել: |
| 9 | Փողոցային լուսավորության անցկացում Մեղրի համայնքի բոլոր բնակավայրերում | 18,6 | 21,0 | – | Կապարված է: |
| 10 | Ագարակ քաղաք մտնող մայրուղու հարևանությամբ <<Հայ-իրանական>> զբոսայգու կառուցում | 312,0 | 0,0 | 0,0 | Չի իրականացվել: |
| 11 | Քաղաքացիական սպասարկման գրասենյակի հիմնում | 8,5 | 8,7 | – | Կապարված է: |
| 12 | Բնապահպանական մարտահրավերները հնարավորությունների վերածելով՝ պլաստիկ աղբից շինանյութերի ներմուծում | 390,0 | 390,0 | – | Ծրագրի շրջանակներում Մեղրի համայնքին հատկացրել են մամլիչներ՝ պլաստիկ աղբի մամլման նպատակով և պլաստիկի տեսակավորման աղբամաններ:Համայնքի կողմից մշակվել է նաև աղբահանության կառավարման ռազմավարական պլան: |
| 13 | Մեղրիի Սբ. Սարգիս եկեղեցու պահպանում և որմնանկարների վերականգնում | 216,0 | – | – | Ընթացքի մեջ է: Իրականացվում է Ռիչարդ Միլսի հիմնադրամի կողմից: |
| 14 | Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքի հիմնանորոգում | 50,0 | 53,9 | – | Արդեն իրականացվել է: |
| 15 | Լիճք գյուղում Մեղրիի համայնքապետարանի վարչական շենքի վերանորոգում | 10,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 16 | Նռնաձոր գյուղում Մեղրիի համայնքապետարանի ներկայացուցչական շենքի կառուցում | 10,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 17 | Մեղրի քաղաքի մշակույթի տան հիմնանորոգում և Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոնի հիմնում | 150,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 18 | Գեղագիտության ազգային կենտրոնի Մեղրիի մասնաճյուղի վերանորոգում | 50,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 19 | Լեհվազ գյուղի մշակույթի տան վերանորոգում | 30,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 20 | Մեղրի քաղաքում երկրագիտական թանգարանի հիմնում | 10,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 21 | Ագարակ քաղաքի նախկին կաթսայատան շենքի հիմքի վրա մարզադպրոցի կառուցում | 150,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 22 | Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանություն | 3,6 | 9,6 | 6,6 | Դիմումների հիման վրա տրամադրվել է սոցօգնություն: |
| 23 | Մեղրիի նախկին պոլիկլինիկայի և Ագարակի նախկին հիվանդանոցի շենքերի վերափոխում բազմաբնակարան շենքերի | 150,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 24 | Բազմաբնակարան շենքի կառուցում Մեղրի քաղաքում | 50,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |

| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
|---|---|---|---|---|---|
| 25 | Բազմաբնակարան շենքի կառուցում Ագարակ քաղաքում | 50,0 | 0,0 | – | Արդեն փռվել է ծրագրի իրագործման մեկնարկը:Իրականացվում է մասնավոր հատվածի կողմից: |
| 26 | Մեղրիի մանկապարտեզի հարակից փարածքի բարեկարգում, կանաչապատում | 10,0 | 0,0 | 0,8 | Ամբողջությամբ իրականացվել է |
| 27 | Մեղրու բերդի վերանորոգում | 10,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 28 | Մեղրի համայնքի գլխավոր հատակագծի կազմում | 9,0 | 0,0 | 0,0 | Հատակագծի կազմման աշխատանքներն ընթացքի մեջ են: |
| 29 | Մեղրիի կոմունալ տնտեսության հավաքակայանի կառուցում | 30,0 | 0,0 | ոչ դրամական ներդրում | Մեղրիի կոմունալ տնտեսությունն արդեն ունի հավաքակայան: ՊՆ-ի դիվիզիոնի նախկին շենքն ու հարակից տարածքն այժմ ծառայում են որպես հավաքակայան:Կիրականացվեն նաև վարչական շենքի վերանորոգման աշխատանքներ: |
| 30 | Մեղրի քաղաք մտնող այլընտրանքային ճանապարհի ասֆալտապատում | 20,0 | 0,0 | 100,0 | Իրականացված է: |
| 31 | Ագարակ քաղաքի Արովյան փողոցի՝ 300մ հատվածի բարեկարգում, ծառապատում | 25,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 32 | Ագարակ քաղաքի նախկին հիվանդանոցից Չարենց փողոցի թիվ 40 շենք տանող ճանապարհի ասֆալտապատում | 50,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 33 | Լեհվազ գյուղի կենտրոնական փողոցի ասֆալտապատում | 10,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 34 | Մեղրի քաղաքի Գործարարների փողոցի՝ 800մ հատվածում մայթերի կառուցում, ծառապատում, լուսավորության անցկացում | 30,0 | 0,0 | 8,4 | Վայրի բնության և մշակութային արժեքների պահպանման հիմնադրամի կողմից անց է կացվել փողոցային լուսավորության համակարգ: |
| 35 | Նկուղային հարկերում թաքստոցների նորոգում | 15,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 36 | Համայնքի գյուղերում հանգստի գոտիների ստեղծում, հուշարձաններին հարող տարածքների բարեկարգում | 15,0 | 0,0 | 0,0 | Իրականացվում են ֆոնդհայթայթման աշխատանքներ |
| 37 | Գյուղատնտեսական շուկայի հիմնում | 25,0 | 0,0 | 0,0 | Պահպանվող տարածքների աջակցման ծրագիր-Հայաստան ծրագրին Բնապահպանության նախարարության կողմից փրվել է համաձայնություն: Նախատեսվում է իրականացնել 2019 թվականին ընթացքում: |
| 38 | Դիահերձարանի կառուցում | 15,0 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել: |
| 39 | Վանք - Կալեր կամուրջի վերանորոգում | 27,2 | 0,0 | 0,0 | Դեռևս չի իրականացվել:Ներկայացված սուբվենցիոն ծրագրի հայտը մերժվել է: |
| 40 | Ագարակ քաղաքում զբոսայգու հիմնում | 37,7 | 0,0 | 33,9 | Կառուցապատման աշխատանքներն ընթացքի մեջ են |

| 1 | 2 | 3 | 4 | | 5 |
|---|---|---|---|---|---|
| 41 | Աղբահանության համակարգի բարելավում | 60,0 | 0,0 | 75,9 | Ձեռք է բերվել 3 աղբատար և 308 աղբաման (որից 148-ը՝ մետաղական, 160-ը պլաստիկ), 2019 թվականից աղբահանություն կիրականացվի նաև համայնքի գյուղական բնակավայրերում |
| 42 | Լեհվազ գյուղի դպրոցում ջեռուցման համակարգի անցկացում | 7,8 | 0,0 | 5,9 | Իրականացվել է |

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ *

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2019 թվականի N 17

## ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՆՌՆԱՁՈՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉՆԵՐԻՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ԵՎ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի N114 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 29-րդ հոդվածի 5-րդ մասով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 37-րդ հոդվածով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի 2019 թվականի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից հատկացնել 5 113 831 (հինգ միլիոն մեկ հարյուր տասներեք հազար ութ հարյուր երեսունմեկ) ՀՀ դրամ (բյուջետային ծախսերի տնտեսագիտական դասակարգման՝ Այլ նպաստներ բյուջեից հոդվածով) Նռնաձոր բնակավայրի բնակիչներին՝ իրենց կողմից փաստացի տիրապետվող հողամասերի գնման հետևանքով առաջացած բեռի թեթևացմանը ֆինանսական աջակցություն ցուցաբերելու նպատակով՝ համաձայն հավելվածի:
2.Ուժը կորցրած ճանաչել Մեղրի համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Նռնաձոր բնակավայրի բնակիչներին ֆինանսական աջակցություն ցուցաբերելու մասին» N114 որոշումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ ----------
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ----------
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ ----------
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ ----------
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ ----------
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՏ ----------
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ ----------

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7
ք. Մեղրի

Հավելված
ՀՀ Սյունիքի մարզի Մեղրի
համայնքի ավագանու 2019թ.
մարտի 7-ի N17 որոշման

| Հ/Հ | Անուն ազգանուն | Մակերես /հա/ | Օտարման ամիս ամսա | Օտարման արժեք /դրամ/ |
|---|---|---|---|---|
| 1 | Խաչատրյան Սամվել | 0,39003 | 27,10,2018 | 411873 |
| 2 | Մկրտչյան Մկրտիչ | 0,14624 | 30,10,2017 | 67565 |
| 3 | Ազիզյան Արա | 0,1406 | 27,10,2018 | 64958 |
| 4 | Ազիզյան Արտաշես | 0,74484 | 27,10,2018 | 786510 |
| 5 | Չիչիյան Միրան | 0,16249 | 30,10,2018 | 171551 |
| 6 | Բոյաջյան Մկրտիչ | 0,39821 | 31,10,2018 | 420510 |
| 7 | Չիթչյան Խաչիկ | 0,36177 | 03,12,2018 | 167144 |
| 8 | Նալբանդյան Գրիգորի | 0,11388 | 21,11,2018 | 52614 |
| 9 | Կարապետյան Ապրես | 0,19793 | 20,11,2018 | 91451 |
| 10 | Կարապետյան Ապրես | 0,39749 | 20,11,2018 | 191996 |
| 11 | Ղազարյան Գուրգեն | 0,8865 | 20,11,2018 | 409570 |
| 12 | Ազիզյան Արա | 0,88584 | 20,11,2018 | 409259 |
| 13 | Չիչիյան Միրան | 0,13292 | 21,11,2012 | 140366 |
| 14 | Բոյաջյան Մկրտիչ | 0,60563 | 26,12,2018 | 639552 |
| 15 | Մկրտչյան Մկրտիչ | 0,59951 | 26,12,2018 | 276980 |
| 16 | Բայանդուրյան Եղիշ | 1,06579 | 26,12,2018 | 492404 |
| 17 | Առաքելյան Արթուր | 0,30258 | 26,12,2018 | 319528 |
| 7 | Ընդամենը | | | 5113831 |

Համայնքի ղեկավար Մ. Զաքարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

---

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

7 մարտի 2019 թվականի N 18

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի կանոններով, Հայաստանի Հանրապետության կառավարության 17 մայիսի 2018 թվականի թիվ 572–Ա որոշմամբ, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի սեփականություն հանդիսացող ներտնտեսային ոռոգման ցանցերը՝ համաձայն հավելվածի, անհատույց շահագործման իրավունքով, 1 տարի ժամանակահատվածով տրամադրել «Սյունիք» ջրօգտագործողների ընկերությանը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7
ք. Մեղրի

Հավելված
Մեղրի համայնքի ավագանու 2019 թվականի
մարտի 7-ի N18 որոշման

# Ց Ա Ն Կ

## ՀՀ «Սյունիք» ջրօգտագործողների ընկերությանը անհատույց շահագործման տրամադրվող գույքի

| Հ/Հ | Օբյեկտի անվանումը | Օբյեկտի հզորությունը (գծ. մ) | Կառույցի արժեքը(դրամ) |
|---|---|---|---|
| 1 | ՀՀ Սյունիքի մարզի Ագարակի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանց | 10060 | 202.873.091 |
| 2 | ՀՀ Սյունիքի մարզի Ալվանքի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանց | 9410 | 153.720.26 |
| 3 | ՀՀ Սյունիքի մարզի Կարճևանի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանց | 3364 | 77.700.883 |
| 4 | ՀՀ Սյունիքի մարզի Լեհվազի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանց | 2722 | 93.265.396 |
| 5 | ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանց | 3091 | 128.005.095 |
| 6 | ՀՀ Սյունիքի մարզի Շվանիձոր-Նռնաձորի համայնքի ներտնտեսային ոռոգման ցանց | 18144 | 257.862.469 |
| | Ընդամենը | 46791 | 913.427.198 |

Համայնքի ղեկավար՝ Մ. Զաքարյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
7 մարտի 2019 թվականի N 19

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ԵՎ ՈՐՊԵՍ «ԱՆՀԱՅՏ» ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՓՈԽԱՆՑՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի 2010 թվականի հունիսի 1-ի N 186-Ն հրամանի 9-րդ կետի 5-րդ ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքում գտնվող, որպես «անհայտ» քաղաքացիների սեփականություն փոխանցված՝ 09-005-0702-0001 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,13317 հա մակերեսով բնակավայրերի հողերի կատեգորիա՝ «բնակելի կառուցապատման հողեր» գործառնական նշանակության հողամասը և 09-005-0602-0081 կադաստրային ծածկագրի տակ գտնվող 0,10936 հա մակերեսով գյուղատնտեսական հողերի կատեգորիա՝ «վարելահող» հողատեսքը, որոնց նկատմամբ գոյություն չունի որևէ իրավունք հաստատող փաստաթուղթ՝ ճանաչել համայնքային սեփականություն:

2.Համայնքի ղեկավարին՝ մեկամսյա ժամկետում ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
7 մարտի 2019 թվականի N20

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՕԳՏՎԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ (ՍԵՐՎԻՏՈՒՏԻ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ) ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, ՀՀ հողային օրենսգրքի 50-րդ հոդվածի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշման դրույթներով, հաշվի առնելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Լեհվազ բնակավայրում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության հողերից 0,0084 հեկտար մակերեսով (09-037-0121-0001 կադաստրային ծածկագրից առանձնացված) արոտավայրը էլեկտրահաղորդման գծի կառուցման նպատակով, հողամասից սահմանափակ օգտվելու իրավունքով (սերվիտուտի իրավունքով), 20 տարի ժամկետով տրամադրել «Յուքոմ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը՝ սահմանելով 20160 (քսան հազար մեկ հարյուր վաթսուն) ՀՀ դրամ տարեկան վարձավճարի չափ:
2.Համայնքի ղեկավարին ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7
ք. Մեղրի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ**
**ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ
7 մարտի 2019 թվականի N21

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՄԵՂՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԸՆԴԳՐԿՎԱԾ, ՊԵՏԱԿԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 76-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի ապրիլի 12-ի N286 որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի հունվարի 14-ի N16-Ն որոշմամբ հաստատված կարգի դրույթներով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի ավագանին

որոշում է՝

1.Տալ համաձայնություն՝ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզի Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի վարչական սահմաններում ընդգրված, պետական սեփականություն հանդիսացող, գյուղատնտեսական նշանակության 10,14023 հա հողամասի (կադաստրային ծածկագիր՝ 09-005-0747-0008) մրցութային կարգով վարձակալության տրամադրմանը՝ տարեկան վարձավճարի մեկնարկային գին սահմանելով 202 810 (երկու հարյուր երկու հազար ութ հարյուր տաս) ՀՀ դրամ:
2.Համայնքի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

Կողմ (7) Դեմ(0) Ձեռնպահ(0)

ԱԴԱՄՅԱՆ ԿԱՐԵՆ
ԱԴԱՄՅԱՆ ՀԱՐՈՒԹՅՈՒՆ
ԳԵՎՈՐԳՅԱՆ ԽԱՉԱՏՈՒՐ
ՀԱԿՈԲՅԱՆ ԳԱՐԵԳԻՆ
ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ՀԱՐՈՒԹ
ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ ԿՈՍՏԱՆՍ
ՄԻՔԱՅԵԼՅԱՆ ՍԱՄՎԵԼ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ. ԶԱՔԱՐՅԱՆ

2019թ. մարտի 7
ք. Մեղրի